




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրուած են միմային խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի էրբայի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւններէ համար վճարուած են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արիստակէս եպիսկոպոս Սեղանեան. Պատմական ֆրագմենտ. Առօրեայ երեւոյթներ. Նամակ կարօյց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հրդեհ և Պաշտօն. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԻԼԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարսկաստանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԻՍԱԿԵՍ ԵՊԻՍԿՈՍՈՍ ՍԵՂԱՆԵԱՆ

1883 թ.ի փետրվարի 20-ին, Արիստակէս եպիսկոպոս Սեղանեան մուտք գործեց Թիֆլիսի իր թեմական առաջնորդ: Ուրեմն նա վարեց վարչական և իմաստասիրական առաջնորդի պաշտօնը մօտ եօթն տարի: 1883 թ.ակապից առաջ Թիֆլիսի թեմի գործերը, թէ եկեղեցական, թէ դպրոցական միասնական խնամքի տակ էին: Սրապէս Սեղանեանի գալուստը այդպիսի հանգամանքներում միանգամայն ցանկալի էր, և ժողովուրդը յոյս ուներ, որ նա կարող կը լինի իր պաշտօնավարութեամբ լիութիւն տալ իր բոլոր յայտերին: Եւ ժողովուրդը իր յայտերի մէջ չը խաբարէր: Արիստակէս եպիսկոպոս իր պաշտօնի մէջ մտած օրից արդէն սկսեց մի այնպիսի եռանդուն, խնայելի և բազմակողմանի գործունէութիւն, որ կարճ ժամանակամիջոցում արդէն երևացին այդ գործունէութեան պտուղները:

Թիֆլիսի եկեղեցական և դպրոցական գործերին ծանօթանալուց յետոյ, Արիստակէս եպիսկոպոսը սկսեց պտտել իր մեծ թեմի զանազան կողմերը՝ անձամբ ծանօթանալու տեղական գործերին: Այդ ծանօթութեանը սկսեցին հետեւի մի շարք բարեփոխութիւններ և օգտակար ձեռնարկութիւններ: Թեմի մէջ սկսեցին հիմնովի նոր դպրոցներ, եղած դպրոցների թէ ուսումնական և թէ անտեսական կողմերը կարգի բերվեցան: Եկեղեցիների և կոնսիստորիաների ներքին դրութեան մէջ մտցնվեցան մի շարք զգալի բարեփոխութիւններ:

Դրա հետ միասին Արիստակէս եպիսկոպոսը սկսեց կազմել մի շարք նախագծեր, որոնք վերաբերում էին եկեղեցական կենսական խնդիրներին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

II

Առաջին անգամ արեւելք և մասնաւոր Պարսկաստանը այցելող եւրոպացի ճանապարհորդի համար այդ երկրի մէջ ճանապարհորդելը դուրսեւալի պիտի լինի: Նա, ով սովոր է միշտ երկաթուղու հանգիստ, բայց միատեսակ ճանապարհորդութեան, խոր տպագորութիւն պիտի ստանայ, երբ ստիպւած լինի նստել ջորու, ձիու, կամ էշի վրա, որը 60 կամ 70 վերստ գնալ չարվաղարի ընկերակցութեամբ կամ կարավանի հետ, շարունակ լսելով դրաստների վզից կախած զանգակների խուլ զոռանջները, գիշերելով կեղտոտ, աղբով լի քարավանատարներում, բայց մեղ հայերիս համար Պարսկաստանում ճանապարհորդելու նկարագրութիւնը այնքան էլ հետաքրքրական չը պիտի լինի, իբրև մի օտարական և ծանօթ բան: Չէ որ մեր օրհնված Անգր-կովկասը շատ հեռու չէ գնացել Պարսկաստանից և իր բարեբերով ու օտարութիւններով նոյն Պարսկաստանին է նման: Եւրոպացի տուրիստը, որ միշտ զուարճութեան նոր տեղ է որոնում, շատ հաճելի է գտնում Պարսկաստանի ճանապարհորդ-

րին և ի միջի այլոց հիմնովեց «Քահանաների ապահովութեան» դանձաւանը: Այդ նախագծերի մէջ վերջին տեղը չէր բռնում և վանքի խարխուլ մայր—եկեղեցին վերաշինելու խնդիրը, որը առաջնորդից անկախ զանազան պատճառներով մշտնաջան կատարելու Արիստակէս եպիսկոպոսը անաջողութեան հանդիպելով վանքի վերաշինութեան հարցում, կարողացաւ հիմնովին և շքեղ կերպով վերանորոգել առաջնորդարանը, որը մինչև այն ժամանակ ներկայացնում էր հայ հասարակութեանը անպատեանք մի ողորմելի չինութիւն: Մասնաւոր մինչև 1885 թ.ակապը Թիֆլիսի առաջնորդարանը մի առանձին կենդանութիւն տուեց թեմի բոլոր գործերին, — շատ գործեր կարգի բերվեցան, թեմի հոգևորականութիւնը սկսեց հարստանալ կրթված, ուսումնական քահանաներով, տղանք քահանաների առաջ վաղվեցան բոլոր դռները, դպրոցների կողմից էլ թեմը բռնեց առաջին տեղը բոլոր թեմերում:

Միջոց հունենալով առ այժմ մանրամասն տեղեկութիւններ հաղորդել այն արդիւնաւետ գործունէութեան մասին, որը ցուց տուեց Արիստակէս եպիսկոպոսը, մասնաւոր երբ իբրև առաջնորդ լիազօր կերպով գործելու իրաւունքներ ունէր, և թողնելով այդ մի բայ անգամի, այնքանը կասենք, որ Արիստակէս եպիսկոպոսի եռանդը, բարի ձգտումները, որոնք գործերը լայն հայեացքները և համակրելի ուղղութիւնը՝ արժանի են աւելի մանրամասն ըննութեան:

Արիստակէս եպիսկոպոսը իր զարգացմամբ և մտաւոր պաշարով էլ ժամանակակից հայ հոգևորականութեան շրջանում առաջին տեղերից մէկը կարող է բռնել: Իր սկզբնական ուսումը ստանալով էջմիածնում՝ դեռ շատ երիտասարդ հասակում նա՝ Մոսկով տեղափոխվելով իրան նուիրեց ուսման, և ի միջի այլոց ուսումնասիրեց ռուսաց լեզուն: Արիստակէս սրբազանը բաւական ծանօթ է ռուսաց լեզուին: Բացի ռուսերէնից սրբազան Սեղանեան հմուտ է և ֆրանսերէն լեզուի մէջ, որը նա արդէն հոգևորական ժամանակ ուսումնասիրել է Կ. Պոլսում, ուր նա երկար ապրել է:

Վարկով զանազան ժամանակներում զանազան պաշտօններ և լինելով սկզբում յաջորդ և վերջապէս առաջնորդի պաշտօն ստանալով, Արիստակէս եպիսկոպոսը իր ոյժերի մի մասը նուիրել է ժամանակակից հայոց կեանքի ուսում-

նասիրութեան և դրական աշխատութիւնների: Այդ ուսումնասիրութեան արդիւնքն են նրա մի քանի աշխատութիւնները, որոնք հրատարակված են, իսկ նրա դրական վաստակների մէջ առաջին տեղը կարող է բռնել Գրեպրի «Եւրոպական աշխատութեան պատմութիւն» յայտնի աշխատութեան լատիներէն թարգմանութիւնը: Գրական աշխատութիւններով պարագլուխ եղել է սրբազան Արիստակէսի սիրած պարագլուխը, և նա այժմ էլ ջերմ ցանկութեամբ ունի՝ առաջնորդի պաշտօնից հրաժարվելով՝ առանձնաւալ և իրան նուիրել գրական վաստակներին, մի օգտակար աշխատութիւն, որի մէջ իսկ նորին սրբազանութիւնը համոզված կարող է լինել, որ երբեք չի մոռացել իրան համակրող ժողովուրդից:

ՊԱՏՄԱԿԱՆ ՅԵՐԱՋՆԵՐ

Մօտ կէս դար է արդէն, որ հայոց գրականութեան և ինտելիգենցիայի մի որոշ շրջանում, որի նշանաւորն է ինչ որ մերն է՝ Լաւ. է., անգիտակցաբար և հետեւողութեամբ կրկնվում են մի քանի անմիտ ֆրագմենտ, որոնց արտաքին խաբուսիկ կեղծի տակ թաքնված է կատարեալ դատարկութիւն:

Այդ տեսակ ֆրագմենտ դրվել, ասվել և կրկնվել են արանից քանի, երեսներ տարի առաջ թէ Պոլսում, թէ Կովկասում և թէ նոյն իսկ արտասահմանում տպվող զրբերի և օրհաններէ մէջ, և այդ նոյն դատարկ ֆրագմենտը այսօր էլ կրկնում են շատերը մեծ վստահութեամբ:

Գատարկ, բայց պատմական կերպարանք ստացած այդ ֆրագմենտ, անկասկած շատ լաւ ծանօթ են ասին մի փոքր ինչ ինտելիգենտ հայեր, և մենք այստեղ առաջ բերելով այդ ֆրագմենտը, մի նորութիւն ասած չենք լինի, այլ միայն կրկնած այն, ինչ որ ամեն օր աւանդապահ կուսակցութիւնը թուովի նման կրկնում և գրում է: Եւ ճշմարիտ, ում չէ պատահել իր կեանքի մէջ հազարաւոր անգամ լսել և կարդալ այսպիսի որոշ կերպով ձուլված ֆրագմենտ, ինչպէս, օրինակ հետեւեալը.

«Մենք պիտի պէտք է պահենք մեր առանձնաշխատութիւնները»

Այդ տարածված ֆրագմենտը, պէտք է խոստո-

նակութեան և վստաւային հաղորդակցութեան համար՝ ձի:

Հանապարհները բոլորովին ապահով են, ոչ մի երկիւղ չը կայ աւաղակային յարձակումների մասին, որովհետև մի ամենափոքր գողութեան համար մահաւան պատիւ է սահմանված, ուստի և շատ քիչ է պատահում, որ ճանապարհորդը աւաղակների ձեռքն ընկնի: Բացի դրանից, սովորաբար քարավանը բաղկացած է լինում մեծ բաղ-մութիւնից՝ ֆարվանը օրը 7—10 աղաւ (ամեն մի աղաւը կամ ֆարսախը հաւասար է 7 վերստ)՝ ճանապարհ է գնում. նա ունի իր իջևանելու որոշ տեղերը, որոնք լինում են կամ դիւղեր, կամ ըստ մեծի մասին Դահ-Արաւից շինած մեծ, բայց այժմ կիսաւործան քարավանատարները:

Պարսկաստանում ամեն տեղ կը հանդիպէք այդ քարավանատարներին: Հեռուց նրանք աւելի բերդերի նմանութիւն ունեն, քան թէ իջևանելութիւնը քաղաքային, շրջապատած պատերով, որի ներեակայեցէք ձեռք մի մեծ, ահալին շինութիւնը քաղաքային, շրջապատած պատերով, որի ամեն մի անկիւնում բարձրանում է մի բուրգ դուռ, զարդարված և նկարված պարսկական հին մօզայիկայով, նկարներով և որի ճակատին զըրված է մի արձանագրութիւն և զանազան այլ-նէր (տուն, յօդուած)՝ Ղուրանից: Արձանագրութիւնը յայտնում է. «Հա՛ն Արաւս առաջին շինեց այս քարավանատար յօթնամ քահապարհորդների, յանուն Աստուծոյ և Մահաւանք մարգարէի»:

վանել, արտայայտել են և արտայայտում են հայոց ինտելիգենցիայի մի բաւական մեծ մասի աշխարհայեցողութիւնը և մտածութեան կերպը, և հենց այդ պատճառով մենք կը փորձենք, որքան մեր ոյժերը թոյլ կը տան, ցոյց տալ թէ այդ և դրանց նման ֆրագմենտ, ոչինչ գրական միտք չը պարունակելով և անկարող լինելով դիմանալ լուրջ ընտելացման, ոչ այլ ինչ են, եթէ ոչ գեղեցիկ, բայց դատարկ և փուլ ֆրագմենտ:

Ասում են. «Մենք պէտք է պիտի պահենք մեր առանձնաշխատութիւնները»: Արդ, ինքն ըստ ինքեան հարց է առաջ դալիս, թէ որքան են այդ առանձնաշխատութիւնները, և ինչ է պարունակվում այդ շինծու բառերի մէջ:

Հայը, ամենից առաջ իբրև մարդ, ենթարկվում է բնական և ֆիզիկական նոյն օրէնքներին, որոնց ենթարկվում է և թուրքը, և ֆրանսիացին և չինացին: Այդ տեսակէտից՝ ինչպէս իւրաքանչիւր անհատ, այնպէս և իւրաքանչիւր աղք ունի մի ընդհանուր մարդկային յատկութիւն, որը սեփականութիւն է ամբողջ մարդկութեան, և եթէ մի կողմ թողնենք այդ բոլորը, և այն լեզու, որով խօսում է մեր ժողովուրդը, նոյնպէս և այն հոգը, որի վրա ապրում է այդ ժողովուրդը—երկու ֆակտորներ, որոնք ոչ թէ առանձնաշխատութիւններ՝ այլ բնական սեփականութիւն են,—այն ժամանակ կը յայտնվի որ մեր աւանդապահ կուսակցութեան դուրս ժողովուրդի առանձնաշխատութիւնները տը-գիտութիւնից և պատմական անաշուղ հանգամանքների շնորհիւ ստեղծված յատկութիւններ են, որոնք ոչ թէ պատիւ, այլ ուղղակի անպատ-ւութիւն են բերում հայ անուան:

Թող ներվի մեզ հարցնել մեր յետադէմներին հրապարակով—որոնք մն նրանց այդ «առան-ձնաշխատութիւն» կոչված յատկութիւնները —Միթէ այն, որ մի ամբողջ ժողովուրդը դուրերի ընթացքում ներշնչված լինելով անշարժութեան ոգով, անընդունակ է դարձել հեշտու-թեամբ իրացնելու ամեն մի նոր և կենդանաւոր գաղափար, և դարեւրից ի վեր անմիա-բանութեան և երկպառակութեան անթիւ և անհամար օրինակներ է աւել:

Որոնք են այդ «առանձնաշխատութիւնները», արդեօք այն, որ մեր ժողովուրդը տղէտ է, և դուրի ուսումից ու կրթութիւնից, թէ այն, որ ընտանիքի և հասարակութեան մէջ դրօշող ճն-

գունից ուղղակի մտնում է քառակուսի բակը, որի չորս կողմերում, պատերի մէջ շինված են փոքր խուցեր կամարակապ. այդ խուցերը ունեն հերթիկներ լոյսի համար և ծխնելոցներ: Ահա այդ խուցերի մէջ են կապում դրաստներին և իջևանում են մարդիկ: Սակայն դարերի ընթացքում թէ խուցերի և թէ բակի մէջ այնքան աղբ է հաւաքվել, որ խուցերից շատերը լցվել են, շատերը՝ կործանվել, խոտերով ծածկվել են և ոչ ոք հոգ չէ տանում վերանորոգել այդ շինութիւնները, որոնք ահապահ ծախս և մարդկային նեղութիւն են վեր առել, հին շինութիւնները նորոգելը մի տեսակ մեղք է համարվում և պարսիկը պատ-րաստ է աւելի մի նորը շինել, քան հինը վերա-նորոգել: Այդ է պատճառ, որ Պարսկաստանում դուք շարունակ կը նկատէք որ հին շինութեան կողքին բարձրացած է մի և նոյն տեսակի մի նորը: Սակայն նոյն իսկ այսօր այդ քարավանատարները իրանց կործանված դրութեան մէջ անգամ մեծ ծառայութիւն են մատուցումով վա-ճառականութեան գործին պատասպանելով, մասնաւոր ձևով, քարավանները և ապրանքը: Այդ քարավանատարներում իջևանելու համար ոչինչ չեն վճարում. նա հասարակաց շէնք է, տեղ հու-նի, ուստի և անտէր մնալով կործանվել է: Իսկ նրանք, որոնք ճանապարհորդում են չափաւոր, իջևանում են չափաւորաններում, որոնք, սովորաբար, գտնվում են գիւղերի մէջ և շատ քիչ զանազանութիւն ունեն գիւղական անեղից: Չա-

չում է թողնել, աղքիւր ծախու ապրանք է ծը-
նողներին համար, իսկ կինն էլ իր մարդու ստորու-
կը, կամ միթէ «առանձնայատկութիւն» է այն,
որ տղիտուկեամբ խմորված ժողովուրդը հիւան-
դին բժշկելու համար ոչ թէ բժշկին է դիմում,
այլ դանազան խաչերին և հայտնութիւններին կամ
գուցէ այդ «առանձնայատկութիւնը» այն է, որ
հայը «տօլմա» և «փլաւ» է ուտում, և նրուսա-
ղէմ է գնում՝ մղղ սի դառնալու:

Որոնք են այդ «առանձնայատկութիւնները»,
արդեօք այն, որ վաշխառու անունը կպցնում են
«հայ» անունին հետ, թէ այն, որ հայը չէ կարո-
ղանում ողորդել ոչ մի բարձր իդէալով և ոչ մի
լայն ու բարձր գաղափարով, թէ այն, որ հայը
լինելով երեցիկ, հասարակական գործիչ, թէ մի
ուրիշ պաշտօնեայ,—առանց խղճահարկելու ու-
տում է հասարակական փողերը, թէ այն որ եղ-
բորից գողնալով և որբերի փող ուտելը հայ
խնամակալի համար սովորական բան է:

Կամ գուցէ «առանձնայատկութիւն» է այն, որ
պապերից ժառանգած նախանձի, թշնամութեան
և եսամոլութեան յատկութիւնները մուտք են
գործել և հայ ինտելիգենցիայի և նոյն իսկ մա-
մուլի և գրականութեան մէջ՝ հասցնելով այդ
պատկառելի ասպարէզներն էլ փողոցային յա-
տուկ վիճակին: Կամ գուցէ այդ «առանձնայատ-
կութիւնը» հայոց պատմութեան այն տխուր է-
ջերն են, որոնք ներկված են անմիաբանութեան
և խառնաբառութեան անջնջիլ ասպարէզներով,
երբ Մովսէս խորենացու նման մարդու ոսկորնե-
րը գետն էին թափում... Եւ վերջապէս գու-
ցէ այդ բոլոր «առանձնայատկութիւններին» chef
d'oeuvre այն է, որ այդ բոլոր յատկութիւններով
խմորված լինելով, մեր նոր սերունդն անգամ մի-
անգամից անկարող է թօթափել իրանից «հայ-
կական» առանձնայատկութիւնները», և մինչև
այժմ էլ եւրոպական կեղծի տակ պահում և
պահպանում է նախահայրերի առաքելի ու-
թիւնն երբ... և այլն:

Դատարի, անմիտ, բայց փրճու Ֆրանչերի տակ
ծածկած պահել այդ տեսակ «առանձնայատկու-
թիւնները», որոնք ուղղակի մեր ժողովրդի կեան-
քի հիւանդոտ մասերն են կազմում, կը նշանակէ
ինքնասպանութիւն գործել, որովհետև ինքնա-
խաբէութիւնը տանում է դէպի ինքնասպանու-
թիւն:

Արդարեւ, մենք ճանաչում ենք մեր ազգի մէջ
ուրիշ «առանձնայատկութիւններ»,—
բայց դրանք մեր յետադէմ և աւանդապաշտ կու-
սակցութեան գոված առանձնայատկութիւնները
չեն, աղիտութիւնից, անշարժութիւնից, նախապա-
շարժութիւնից և խառնիք ծագած առանձնայատ-
կութիւնները չեն, այլ այն առանձնայատկութիւն-
ներն են, որոնք պահպանում են հայերին, որպէս
ազգ ու թիւն՝ դարերի ընթացքում:

Ս. Մ.

Փարսիսնէն բաղկացած է մի մեծ ախոռատից
կամ գոմից, ուր կապում են ձիաները և մի եր-
կու սենեակից ուղեորներին համար: Ամեն 5, 6
աղաճի վրա մի չափարխան է շինված, որտեղ
փոխում են ձիւն. պատահում են և այնպիսի չա-
փարխաններ, որոնց հեռավորութիւնը միմեան-
ցից 7 աղաճ է լինում:

Որովհետև չափարխանէն ամբողջ Պարսկաստա-
նի փոստային հաստատութիւնն է, ուստի մի
քանի բացատրութիւն տալը նրա մասին աւե-
լորդ չենք համարում: Չափար իսկապէս ասել
է սուրհանդակ, որ տանում է փոստը: Երբ փոս-
տը օրինակ գալիս է Ռուսաստանից՝ և Զուլֆայի
ուռուսաց փոստատունը յանձնում է պարսիկ փոս-
տատան Պարսկաստան ուղարկվելը՝ նամակները
և ծրարները, պարսից չափարը ամբողջ փոստը,
որ ամբարցած է լինում կաշուէ քսակների մէջ,
կապում է իր ձիու քամակին թամբի ետևից, մի
ուրիշ քսակ կապում է չափար-շակերտը (սուր-
հանդակի աշակերտը), որի պաշտօնն է ընկերա-
նալ չափարին մինչև առաջիկայ կայարանը և
յետ լեռնի ձիաները: Ետևելով ձիւն չափարը քա-
ռաստմակ քշում է ձիւն, նրա ետևից չափար-շա-
կերտը: Ձիերը վազում են անընդհատ, երբեմն
երբեմն կանգ առնելով շուրջ քաշելու համար
մինչև կայարանը. այդտեղ փոխում են ձիաները
և տալիս են նորերը: Նոր չափարի հետ մինչև
հետևեալ կայարանը և այսպէս մինչև կէտ նպա-
տակին: Չափարը ժամը 2 աղաճ է գնում սովոր-
աբար, իսկ եթէ անապարտ է և աւելի թունդ է

ԱՌՈՐԵԱՅ ԵՐԵՒԱՆԻՆԻ

Մեր անցեալ յօդուածում խօսեցինք այն ան-
բնական դրութեան մասին, որը տիրում է մեր
կեանքի մէջ, և որի շնորհով մեր երիտասարդը,
ինտելիգենտ ոյժերը անգործադիր են մնում, թէ է
գրանց մէջ մեծ պէտք ունի մեր երկրի ժամանա-
կակից կեանքը: Մեր այս յօդուածում ցանկա-
նում ենք մի քանի խօսք ասել այդ մասին, թէ
ինչ միջոցներով պէտք է աշխատել ոչնչացնել
այդ վնասակար երևոյթը:

Մեզ թվում է, թէ այդ բանը կարելի է անել
առանց մեծ դժուարութիւնների, եթէ մենք մո-
տենանք գործին լուրջ, դիտակցաւոր և առանց
տատանվելու, ինչպէս, առհասարակ, ձեռնամուխ
են լինում խոր համոզված մարդիկ մի գործի, որի
աջողութեան մէջ նրանք չեն երկմտում: Պէտք է
թողնել մի կողմ կոյր գիպուածների աջող գու-
մարման յոյսերը, պէտք է թողնել բաղդի վրա
ապաւնումները. նրանք անհատաբար ոգնա-
կաններ են և կարող են խաբել մեզ: Բաղդը
այսինքն գործի համար աջող հանգամանքներ,
ուժեղ մարդիկ իրանք են ստեղծում:

Էլմիսմանի, Շուշու, Ռիֆիլի, Երեանի հոգևոր
հայ սեմինարիաները ունեն ահադին կալուածներ,
որոնք բաղկացած են վարելահողերից և ամենա-
թանկագին անտառներից: Այդ բոլորը, ինչպէս
յայտնի է, կամ կամայականացած հաշված են, կամ
մնալով առանց խելացի հարստացումների,
անարդիւն, անօգուտ կերպով մնում են ընկած:
Եթէ Էլմիսմանի և միւս հոգևոր դպրոցների հա-
մար թանգ են այդ ազգային, հասարակական
կալուածական հարստութիւնները, նրանք չը պի-
տի սպասեն, մինչև մեր զանազան գիւղատնտե-
սները, չեքանապահները, անտառապետները, կաթ-
նաբոյժները, և այլն, չարժեքով «աղբափորու-
թիւնից», յանձն առնեն նրանց խնամակալու-
թիւնը, հոգատարութիւնը, կարգի բերելը,—
այլ իրանք, իրանց սեփական ինիցիատիվով
պիտի հրաւիրեն մեր բոլոր ոյժերին՝ վերցնելու
իրանց վրա նրանց խելացի տնօրէնութիւնը, և
պէտք է հրաւիրել նրանց, ոչ թէ ինչպէս առ-
րեայ կեանքում հեզօրէն ասում են «ազգասի-
րաբար» առաջ տանելու գործը, ոչ, այլ ապահո-
վելով նրանց, ուժիկները նշանակելով նրանց, այն
էլ այնպիսի առիթներ, որ այդ մասնագէտնե-
րը կարող են ստանալ, օրինակ, մտնելով ուղ-
ղակի պետական ծառայութիւն: Այդ մի կողմից
Ռուսաստանի մէջ ուսուցչական ցեղը,
ինչպէս յայտնի է, գտնվում է անմիջական դու-
թեան մէջ, որից առաջ են դալիս վատ հետե-
ւանքներ: Ներսիսեան դպրոցի, Շուշու, Երեանի
և այլ դպրոցների հոգաբարձութիւնները, աչքի
առաջ առնելով այդ բոլորը, պիտի աշխատեն ոչ
թէ կոպէկներ տնտեսին, այլ միջոցներ ձարել
հրաւիրելու համար մեր մէջ անդադրող բազմա-
պատկիւր մանկավարժներին, լեզուաբաններին,
բնագէտներին, մաթէմատիկոսներին և այլն, բայց

քշում՝ 3 աղաճ: Զուլֆից թափվել 20 աղաճ է և
այդ տարածութիւնը, որ չարվաղարը կամ քար-
վանը 3—4 օրում է գնում, չափարը գնում է
10—15 ժամում, տեղ-տեղ հանգստանալով: Այդ
տարածութեան վրա չորս չափարխան է կամ
կայարան կալ. ամեն կայարանում 10—12 ձի
է լինում կապած: Այդ կայարաններն պաշ-
պանութիւնը իջարայով կամ կապով տրված է
զանազան մասնաւոր մարդկանց, որոնք ստա-
նում են փոստի համար տարեկան մի փոքր ե-
կամուտ-փող, ցորեն, զարի, փոստը տանող ձի-
րի համար ամեն մի աղաճին մի ձիուց ստանում
են 10 շահի (15 կօպէկ), իսկ մասնաւոր ճանա-
պարհորդներից 1 զուան (30 կօպէկ): Ամեն մի
կայարանում մի նայիր կալ և 3—4 չափար չա-
կերտ, որոնք ընկերանալով ուղեորին ստանում
են ընծայ 1 զուան կամ 2 զուան, ինչպէս մեզա-
նում ստանում են եմշկիները չնափողիս: Այդ
հաշուով չափարի գնացող օրինակ Զուլֆից թափ-
վել, որ 20 աղաճ է, լծարում է երկու ձիու հա-
մար, միւր իրանը, միւրը չափար-շակերտինը 40
զուան, 4 կայարանում չափար-շակերտին ընծայ
4 զուան, 6 զուան էլ մանր ծախս, երբեմն ըն-
ծայ մի երկու զուան նայիրին, որ լաւ և չը յոգ-
նած ձի տալ, որոքը 5 թիւան (15 ռուբլի):

Թափվելից թէհրան 94 աղաճ է (658 վերստ):
Քարվանը կամ չարվաղարը այդ տարածութիւնը
20—22 օրում է գնում, իսկ չափարով գնում
են 6 օրում և ծախս լինում է, եթէ գնացողը մի
հոգի է, 25 թիւան, մինչ չարվաղարով ծախս

հրաւիրելու նրանց ոչ թէ «ազգասիրական» պատ-
ճառարանութեամբ, այլ նրանց լաւ ապահովե-
լով ուժիկներ նշանակելով այնպիսի քանակու-
թեամբ, որ նրանք, այդ մասնագէտները, կարող
են ստանալ, օրինակ, պետական դպրոցներում:

Ելի մի ուրիշ ճանապարհ: Կովկասի բնական
հարստութիւնները, թէ մշակված և թէ անմշակ,
ինչպէս յայտնի է, կամ կամայականացած անցնում
են օտարներին ձեռքը, որոնք առանց այն էլ մե-
ղանից հարուստ են, կամ թէ մնում են առանց
մշակվելու: Մեր հայ կապիտալիստները, տեսնե-
լով այդ բոլորը, ոչ թէ յուսահատ, ինքն քիւր
պիտի պէտք է արոնջային երկրի աղքատութեան
վրա, ոչ թէ պէտք է մեռնել իրանց կապի-
տալները արժեւորմանը կամ զանազան բազ-
դաւոր և անբաղդ տոմսակներ գնելու վրա,—
այլ պիտի աշխատեն և ձեռնամուխ լինել եր-
կրի հարստութիւնների խելացի արդիւնաբերու-
թեանը, հրաւիրելով դրա համար մեր տեղական
երիտասարդութիւնը, մեր գիւղատնտեսներին, գե-
նեգործներին, լեռնային ինժեներներին, քիմիկոս-
ներին գործի դրուել անցնելու:

Նոյն կարելի է ասել մեր կեանքի և բոլոր
միւս հասարակական, տնտեսական, ուսումնարա-
նական գործունէութեան մասին: Չը պէտք է
թողնել գործերը երեսի վրա ընկած և տըր-
տնջալ, պէտք է լուրջ, ներգործական կերպով
և եռանդով ձեռնամուխ լինել նրանց և հրաւի-
րել նրանց դուրս կանգնելու իրանց գործը լաւ
խմացող մասնագէտներ, որոնք օրից օր լցնում
են մեր հասարակական միջնորդը, միջոց չը
գտնելով և ճանապարհ չունենալով գործադրե-
լու իրանց սեփական ոյժերը երկրի օգտին:

Թողնելով, մի կողմ, խօսելու այն մասին թէ
ինչ ահադին նշանակութիւն կարող է ունենալ
սեփական ինտելիգենտ ոյժերի կենտրոնացումը
երկրի մէջ, թողնելով նմանապէս խօսելու այն
նշանաւոր և ուղադրութեան արժանի հանգաման-
քի մասին, թէ ինչքան կարևոր է հէնց այժմեանից
մտածել գործելու ասպարէզ բանալու մեղ ամեն
տեսակ տեսանալիքների համար, որով և կարելի
կը լինի տեղական ոյժերի անգործ մնալուն կամ
ցրվելուն առաջն առնել, թողնելով խօսելու
ինչպէս այդ կողմերի վրա,—բաւականանում ենք
նկատելով, որ միայն այդպիսով՝ կենտրոնացնե-
լով երկրի մէջ մեր սեփական ոյժերը և նրանց
ձեռք տալով զանազան ճիւղի գործերի ղեկա-
վարութիւնը, կարելի է կենդանացնել երկիրը,
ներշնչել մեր հասարակական կեանքը միջնորդի
մէջ նոր, թարմ, կենսաբար, պտղատու ոյժ, որ
այդպիսով կարելի է հաստատ հիմքերի վրա
դնել երկրի կուլտուրական առաջխաղացութիւնը
և միջոց տալ կեանքին առողջ կերպով բողբո-
ջելու, ծաղիկելու և կենդանի պտուղներ տալու:

Միայն թէ պէտք է թողնել ինքնախաղաղութե-
թիւնները և իլլիգիւանները մի կողմ, և ձեռնաբ-
կել գործին լրջութեամբ, հաստատակամութեամբ
և մի քիչ էլ անձնուիրութեամբ, ինչպէս առհա-

կը լինի 10 թիւան: Թէ և տարբերութիւնը ժա-
մանակի կողմից մեծ է, բայց պէտք է ասել որ
չարվաղարով ճանապարհորդելու աւելի չարմար է,
եթէ մէկն ուղում է ծանօթանալ երկրի հետ,
թողած է ծանօթութիւնը: Ամեն մարդ էլ չէ կարող
չափարով գնալ, պէտք է ունենալ խիտ ամբող-
կազմութեան դիմաւորում համար, որովհետև չա-
թուանակ ձին քառասունակ քշելուց, չարուանակ
թափահարելու (մասնաւոր եթէ ձին վատ է)
մարդու ամբողջ մարմինը ջարդվում է, ոսկորները
ջարժվում են, ողնաշարը ցաւում է, աղիքները
զալարվում են, որից շատ անգամ աղիքների հի-
ւանդութիւն է առաջ գալիս, այդ պատճառով
մի քանի նախազգուշութիւններ են հարկաւոր,
որ գործադրում են միշտ չափարի գնացողները:
Պէտք է ստամոքսը պինդ կապել մի կաշուէ գո-
տիով և յաջորդաբար սեղմել, որպէս զի աղիքնե-
րը չը ջարժեն, պէտք է կուշ չուտել, այլ բա-
ւականանալ թիւրմալ կամ թնալով ձուով: Եր-
կար կօշիկներ պէտք է հագնել, որ սրունքները
չարուանակ դիպչելով թնալին չը վրաւորվեն: Ա-
ռաջին օրը պէտք է քիչ տարածութիւն գնալ,
քիչ քշել և կամայ, երկրորդ օրն աւելացնել և
հետզհետեւ թունդ քշել: Կան այնպիսի չափար-
ներ, որոնք ամենակարեւոր և սովորաբար ղեկա-
ւաններում թափվելից թէհրան 3 օրում են գը-
նում: Ով ուղում է շուտ և լաւ գնալ, պէտք է
չափարխաներում առատ ընծայ տալ նայիրներին
և չափար-շակերտներին, այն ժամանակ հանդիստ
և լաւ ձի կը տան: Չափար-շակերտը մի երկար

տարակ անում են իրանց գործի մէջ համոզված
մարդիկ: Այդ տեսակ գործունէութեան մէջ պէտք
է օրոնել մեր երկրի բարբորութեան և առաջա-
դիմութեան հիմնական, սկզբնական պայմանները:
Ա.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Հոկտեմբերի 22-ին

Ամսի 15-ին՝ համաձայն Կովկասի Հայոց Բա-
րեգործական ընկերութեան կանոնադրութեան
6-րդ յօդուածին, կայացաւ տեղիս տեղական
ճիւղի ընդհանուր ժողովը, որը զբաղվեց առա-
ջիկայ տարվայ նախահաշիւը դնելով և բացա-
կայ մի փութանդամի փութարէն մի ուրիշ ընտ-
րելով:

Բարեգործական ընկերութեան տեղական ճիւ-
ղի բացման թոյլտուութիւնը ստացված է մայիսի
29-ին, իսկ վարչական անձանց ընտրութիւնը՝ յու-
լիսի 9-ին այս տարի, և որովհետև Բարեգործական
ընկերութեան տարին նոյեմբերի 15-ից է սկսվում
և նոյեմբերի 15-ին վերջանում, ուստի Կարսի տե-
ղական վարչութիւնը նպատակադարձաբ էր դա-
տել առաջիկայ նոյեմբերի 15-ից սկսվել երկրորդ
տարին, ուրեմն և իւրաքանչիւր անդամակից 17
ամսվայ համար վճարելու է երկու տարվայ
վճարը՝ տասը ռուբլի: Վարչութեան այդ միտքը
ընդունեց ընդհանուր ժողովը: Այդ հաշուով
վարչութիւնը կազմել էր իր նախահաշիւը, երթա-
ղելով 80 անդամներից 800 ռուբլի, և այլ են-
թադրեալ մուտքեր 500 ռ., ընդամենը՝ 1300 ռուբ-
լի: Այդ գումարը օրոյշված է գործադրել հետե-
ւեալ կարգով: 1) Ն իկատի ունենալով, որ տեղիս
դպրոցների նիւթական դրութիւնը միջոց չէ տա-
լիս հոգաբարձութեանը բաց անել օրիորդաց ու-
սումնարանի երկրորդ դասարանը և մի և նոյն
ժամանակ օրովհետև տեղական վարչութեան նիւ-
թական միջոցները չեն ներում օրիորդաց մի ա-
հաստագիտական ուսումնարան բանալու, ինչպէս
ցանկանում էր վարչութիւնը, ուստի որոշվեց
եկող 1889/90 ուսումնական տարում օժանդակու-
թիւն տալ տեղիս ուսումնարանին 400 ռ. այն
պայմանով, որ հոգաբարձութիւնը նոյն տարում
բաց անէ օրիորդաց երկրորդ դասարանի Ա. բա-
ժինը (իսկ հետեւեալ տարում ենթադրում է վճա-
րել 800 ռուբլի, որպէս զի բացվի և Բ. բաժինը):
և ձեռագործի վարժարանի ընտրվի հոգաբարձու-
թեան և վարչութեան համաձայնութեամբ ու խիստ
ուշադրութիւն դարձնելով ձեռագործի դասաւան-
դութեան վրա, որովհետև վարչութիւնը մտադիր
է ուսումնարանի ուսումնասարտ աշակերտուհի-
ների համար բանալ մի ահեստագիտական ու-
սումնարան: 2) Չըստ աշակերտներին ուսումնա-
կան պիտոյքներ հայթայթելու և զգեստներ անելու
համար օրոյշված է 200 ռուբլի: 3) Աղքատներին
և կարօտեալներին օգնելու համար 200 ռուբլի:
Ժամանակին՝ երբ տեղ. ճիւղը միջոց կունենայ,
անշուշտ կը շատացնէ այդ գումարը, որովհետև

Պարսկան ձեռքին ընկնում է առաջ. նրա ետե-
ւից ծառադ, եթէ ունենալ յետոյ դու. եթէ նա
յոյս ունի լաւ ընծայ ստանալու ուրախ է և հա-
զիւ դուրս ես գալիս չափարխանից, որ բաց է
թողնում ձին. առաջ ձիաները գնում են երկշով,
յետոյ քիչ-քիչ վազում են քառասունակ: Այդ ձի-
երը այնքան սովոր են խառնալի, որ ամեն եր-
կու րօպէ պէտք է մտրակել: Երկու երեք վերստ
գնալուց յետոյ, չափար-շակերտը ձայնում է
«Նուլֆից»): Ձիերը կանգնում են մի քիչ շուրջ
առնելու, յետոյ դարձեալ վազում են. պատա-
հում է որ նրանք յոգնում են և այն ժամանակ
ոչ մի մարակ այլ ես չէ կարողանում շարժել նը-
րանց տեղից: Մի կերպով հասնում ես միւս չա-
փարխանէն, ձիերը փոխում են և դարձեալ քը-
շում ես: Թանկարժ տարիսլ—ձիի փոխկապը տը-
րաքում է և չափար-շակերտը կամ ձիաւորը
գլխի վրա փոխում է ճանապարհի վրա. բայց
այդ ոչինչ, նա նորից կանգնում է, ամբացնում
է փոխկապը և դարձեալ քշում է: Սովորաբար,
որը երկու անգամ պէտք է ի նկատի ունենալ
այդպիսի դիպուածներ: Եւրօպացիները չափարով
գնալու աւելի նախամեծար են համարում, աւելի
զուարճալի են գտնում, ուստի և միշտ չափարով
են գնում:

Սակայն ով որ ընտանիքով է, ճանապարհոր-
դում կամ ծանրութիւն շատ ունի, նրան անկա-
րելի է չափարով գնալը. պէտք է չարվաղարի ձի-
եր վարձել:

(Կը շարունակվի)

Թիւնը չի նկատուած արդարեւ, որ 99 տարի ինքն արդիւնաւորութիւն, յետոյ յանձնէ տէրութեանն Պարսկիւնի խառնար, ի հարկէ, զարմանքի մեծ առարկայ էր ձեռքարկ երկաթուղին, ահա- զին բազմութիւն էր հաւաքուել. մի երկուստարդ պարսկուհի տեսնելով ինչպէս երկու ձի ահագին կառքը քաշում են բազմութիւնով լի, բացա- կանչեց, «մուրդաշին (կողոլը) տանի այս ֆրանսի- ներին» տես, չէլման են, չէլման. ով է տեսել, որ երկու ձի այսպէս ծանրութիւն տանի»

Բացի տրամալայից Թէրանը սկսել է լուսաւոր- վել այժմ դադարի Առհաւարակ Թէրանը վերջին մի ջանք տարինքը մեծ փոփոխութիւններ է ենթարկվել և այդ արդիւնը է ամեն անգամ Շա- հի Եւրոպայի ճանապարհորդութեան Այս նոր ճանապարհորդութիւնը նոր փոփոխութիւններ պիտի բերէ նոյնպէս:

Հ. Առաքելեան

ԱՐՄԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից մեզ գրում են, «Պատերազմական փոխանորդ Գեորգ Վարդապետ իւրիւնքան կերակրի օրը հեղինական զեպտանտունը զնաց, և ի դիմաց խորհրդի պատերազմին» չնորհաւորութիւն յայտնեց Յունաստանի զաւթառանգ իշխանին և Սօֆիա իշխանուհու ամուսնութեան առիթով»:

—Բերլինից գրում են, որ իշխան Բիսմարկ զգո՞ւ է Ռէյստագի մէջ տեղի ունեցող վիճա- բանութիւնների ընթացքից, և մտադր է Բերլին վերադառնալ, պատգամաւորների վրա ազդեցու- թիւն գործ դնելու համար:

—Խոսկիւով ազգային ժողովի բացման առի- թով, բոլորական «Ազատութիւն» լրագիրը այն միտքն է յայտնում, որ Բոլորական քաղաքական դրոշմընք այժմ աւելի լաւ է, քան թէ ազգային ժողովի անցեալ բացման ժամանակ:

—Գերմանական թէլեգրաֆի նիստերից մէկում, երբ քննուում էր մաքսերի խնդիրը, հարց բարձ- րացաւ, թէ արդեօք կառավարութիւնը պէտք է շարունակէ պրօտեկցիօնի դմէն հետեւել, թէ աւելի լաւ է դիմել ազատ առեւտրի սիստեմին: Մինիստրը յայտնեց, որ վերջին միջոցին դիմելը այժմ անկարելի է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի հայոց Ուսումնական խորհուրդը իր վերջին նիստի մէջ ի միջի այլոց նկատելով որ Պոլսի մէջ ալ ալ տեղեր կարճատեւ և կեղծ- մաշկութեան հիւանդութիւններ են ճարակել, ո- րոշեց չըջարեական գրութեամբ յանձնարարել մայրաքաղաքի բոլոր թաղական խորհուրդներին, որ փութան իրանց թաղի վարժարանների երկ- սեռ ուսանողները շարաքը գէթ մէկ անգամ են- թարկել բժշկական այցելութեան և եթէ հիւան- դացեալները դռնվին, անմիջապէս յանձնել իրանց ծնողների և միանգամայն յանձնարարել, որ այդ բժշկական այցելութիւնը այսուհետեւ ևս շարու- նակաբար ի գործ դրվի տասն հինգ օրը մէկ անգամ:

Էդինբուրգում դալ տարի լինելու է էլէկ- տրական ուժի ան զուգահեռներով զրա փոխ- նախագահ ընտրված է Լիւրսոն:

Սպանիական կառավարութիւնը «Correspon- denzia de Espana» լրագրի խմբագրին մարկի դի տիտղոս շնորհեց: Այդ առիթով հրատարակած պաշտօնական հաղորդագրութեան մէջ ասված է, որ յիշեալ ժուրնալիստը վարձարվում է պետու- թեան մատուցած իր ծառայութեան համար: Ժուրնալիստները առհասարակ Սպանիայում մեծ պատիւ ունեն: Այժման միջնադարից շատերը երբեմն քաղաքական լրագիրների աշխատակից- ներ են հղել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄԱՆԻՏԱՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ. 25 հոկտեմբերի երեկ Բերլինի գործարանում կաթնալի պայթումից վնասվեցան վեց լանտեր, որոնցից մէկը մուռաւ, երկը ծանր վերջ ստացան, իսկ երկուսը համեմատաբար թե- թիւ վերջ ստացան: Արհեստանոցի կառքը քանդ- վեց: Երեկ Պետերբուրգում բացվեց երկրորդ համառուսական ֆարմացիոնական ժողովը:

Կ. ՊՈԼԻՍ. 25 հոկտեմբերի Սուլթանը մատու- ցեց զերմանական կայսրուհուն թանգալին մա- նակ, իսկ կայսրին նուիրեց մի շքեղ սուր, շքեղ նկարներով, կահկարասիք և զրաւեղանի պարագաներ թանգալին քարերով զարդարած: Վիլհելմ կայսրի և Սուլթանի մէջ տեղի ունեցած խորհրդակցութիւնների հետ միաժամանակ բանակ- ցութիւններ տեղի ունեցան կոմս Բիսմարկի և արաւելին գործերի միմիտար Սալդ փաշայի մէջ: ԲԵԼԳՐԱԿ. 25 հոկտեմբերի Բելգրադի կողմից Միլանի պատգամաւոր ընտրվելու լուրը հերք- վում է:

ՄԵԼԲՈՐՆ. 25 հոկտեմբերի Այստեղ ստա- ցած տեղեկութիւններին նայելով՝ Սոյումոնեան կղզիների տեղացի բնակիչները սպանեցին Նել- սոն անգլիացուն և երեք տեղացի երեխաներ, որոնց բոլորին էլ սպանողները կերան: Բրիտանա- կան «Royalist» նաւը ուղարկեց այն գիւղերը, որտեղ տեղի էր ունեցել այդ սպանութիւնը: Տե- ղացիները, որոնք առաջ էլ մարդակերութիւն էին արել, փախան դէպի սարերը:

ՋԱՆԶԻԲԱՐ. 25 հոկտեմբերի Գերմանացի յայտնի ճանապարհորդ զոյգտար Պիտերսին և նը- րա բոլոր ուղեկիցներին, բացի մի եւրոպացուց և մի նեգրից, տեղացիները ծեծել են: Ասում են, որ կենդանի մնացածները երկուսը վերադարձն- են և այժմ գտնվում են Օգաստի մէջ:

ՊԱՐԻՋ. 25 հոկտեմբերի Միլանը վերջնակա- նապէս բնակութիւն է հաստատում Պարիզում:

Կ. ՊՈԼԻՍ. 25 հոկտեմբերի Գերմանական կայսրը և կայսրուհին ուղևորվեցան վերջին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ. 26 հոկտեմբերի «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրի Պարիզի գործակալ է նշանակված Արտուր Բա- ֆալովիչ, որը քաղաքատնտեսական և ֆինանս- ների մասին գրող է, Պարիզի մի բանկիր օրդի է, որը զբաղեցնում էր և Սլեսալովում:

ԲԵՐԼԻՆ. 26 հոկտեմբերի Պետական կանցլերը այսօր ստացաւ Վիլհելմ կայսրից, Կ. Պոլսից հե- տեւալ հեռագիրը «Ուղևորվելով այստեղից, կա- րող եմ հաղորդել ձեր պայծառութեան, որ ես միանգամայն զո՞ւ մնացի այստեղ լինելուց: Սուլ- թանը և ամբողջ ազգաբնակչութիւնը առանց խտրութեան դասակարգի և կրօնի, աշխատում էին յայտնել ինձ իրանց կատարեալ համակրու- թիւնը»:

ՎԻԵՆԱ. 27 հոկտեմբերի «Fremdenblatt» լրագրին Բերլինից հաղորդում են, որ Ֆրեյդըլս- րուէն մէջ եղած խորհրդածութեան հետեւեցը բաւարար բնաւորութիւն ունի: Թագաւոր կայսրի Բերլինի այցելութիւնը, որի հետ միացած են նոր յոյան եւրոպական խաղաղութեան պահպանու- թեան մասին, աւելի մեծ նշանակութիւն ստա- ցաւ Բիսմարկի տեսակցութեան պատճառով կոմս Կաշիկիին հետ վաղը Կաշիկի դաւո՞ւ է վիէն- նաւ Politische Corresp. լրագիրը հաղորդում է, որ Վիլհելմ կայսրը վերադառնալով Գերմանիա, կը տեսնվի Ֆրանց-Յոզֆի կայսրի հետ Խաղաղու- կում: Տեսակցութիւնը, ինչպէս ասում են, մաս- նաւոր ընտրութիւն կունենայ:

ՎԻԵՆԱ. 27 հոկտեմբերի Այստեղ հասաւ նախկին թագաւոր Միլան, ուղևորվելով դէպի Բելգրադ: Նրա ճանապարհորդութեան նպատակն է՝ համաձայնութիւն կայացնել Նապոլիա թաղա- հու և ինքնակալութեան մէջ:

ԼՕՆԻՕՆ. 27 հոկտեմբերի «Times» լրագրին հաղորդում են Վիեննայից, որ Վիլհելմ կայսրի Կ. Պոլսի այցելութիւնը այս հետեւեցը ունեցաւ. առանց ընդարձակօրէն խոսելու մասնաւոր հար- ցերի վրա, կայսրը աշխատեց համոզել սուլթա- նին, որ երեքշաբթեան դաշնակցութիւնը միմի- այն խաղաղութեւ նպատակներ ունի և այդ բանը նրան աջակցեց: Կոմս Բիսմարկ իր յարաբերու- թիւններում մեծ-վիզիթի հետ ոչինչ առաջարկու- թիւն չարաւ ոչ Բոլզարիայի, ոչ էլ Կրետէի գոր- ծերի վերաբերմամբ, որոնք կարող էին որ և է կերպով նեղութիւն պատճառել գերմանական կառավարութեանը:

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏԵ

ՊԵՏԵՐԲՈՐԳ. Ա. Գ. Չեր երկու մեծ յողուած- ները արվեցան ձեր յանձնարարած պարտին, ինչ- պէս դուք խնդրել էիք:

ԵՐԵՎԱՆ. Ա. Երևանի զաւառի մուլքադարների և դիւղացիների մասին և առհասարակ տեղական հո- ղային հարցի վերաբերեալ զրաւածները մեծ օրով և ուրախութեամբ կը սպազորեմք միշտ: Իսկ եթէ ձեր յողուածը չէ սպազորում, դրա միակ պատճառն այն է, որ ես գրված է անհասկանալի կերպով և անմշակ է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԻՈՐ ԱՐՄԻՈՐՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Չորեքշաբթի, նոյեմբերի 25-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւա- պետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) շուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւններին մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմոնդուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Ար- ծրունի գալլերէում, № 114.

(Շ.) 2—3

Մի հայ ԵՐԻՏԱՍԱՐԳ, որը արտասահմանեան մի զարդում ուսում առած է, որը հմուտ է անգլիերէն, ֆրանսերէն, հայերէն և թիւրքերէն լեզուների, ցանկա- նում է ԹԻՖԼԻՍԻՍԿԱՄ կամ յիշեալ լեզուների մասնաւոր տներում դաստառ լինել, կամ որ և է առեւտրական հիմնադրութիւններում հաշուապահութեան և օտար լեզուների գրագրութեան պաշտօն վարել:

3—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՌԱՍԱՐԿԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ա մ ի ն օ ր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ՐՈՒԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՐԻՇԿԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԻՆՎՍԿԻ—11—12 ժ. տղանցի, կողորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբույժ և ատամնացաւի)
ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրախ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՌՍՄԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաների և սիֆիլիսի.
ՓՈՒԼԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջրային ց. (էլեկտրօտերապիա):
ԲԵՆԿԻՆՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մանկաւարձ ու հիւ՞ր՝ Երևանցի ան և Արտազեան:
ճար—50 կ. Համախորհրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի փոխ-վերապետուհ ԲՈՒԿՈՎՍԿԻ

ԲԺԻՇԿ ՊՐԵՕԲՐԱԺԷՆԱԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլեկտրականութեամբ, ֆարադական և զարկանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, ընկճախից, ներվային հիւանդութիւններից և կոնտ- րակտուրայից (միանունների անդամալուծութիւն), բժշկում է կոլերին և խոլերին անդամալու- ծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին:
Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պապովի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Ելիսաւեթինայա № 2, լնտնդատնութեան մօտ, Վօրոնցովեան կահաւորված սենեակների դիմաց:
Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Итендантства, противъ Воронцовск. номеровъ.

14—14

Մի զերպատան

ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ԳԻՇԵՐՈԹԻԿՆԵՐ:

Դիմել հետեւեալ հասցեով. Սոլջալ՝ Գանձակի փողոց, տուն Շադինեանցի № 25.
8—10

Abonnementseinfadung au
die meist verbreitete deutsche Wochenschrift:

Das Echo

(Stimmen aus allen Parteien.)

Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.

Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirt- schaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Vorgänge, welche sich in Deutschland und Aus- lande abspielen.

Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen.

Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.

Das Echo bringt in jeder Nummer ein bis zwei abgeschlossene Romanletten, Erzählungen u. s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schriftsteller.

Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten Erscheinungen des internationalen Büchermarktes.

Das Echo betrachtet es insbesondere als seine Aufgabe, dem Leben und Treiben der Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.

Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein "Vote aus der Heimat" sein, deshalb ist auch sein Abounementspreis ein sehr niedriger. Es versendet die Expedition in Berlin S. W. das Echo nach allen zum Weltpostverein gehörigen Ländern für 4 Mark 50 Pst. vierteljähr- lich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieten außerhalb des Weltpostvereins für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschehen am raschesten und sichersten durch Postanweisung oder durch Anweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede deutsche Buchhandlung und Zei- tungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern sind durch die letzteren zu beziehen oder auch direkt von

J. H. Schorer,
Verlag des Echo, Berlin S. W.